ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողի քննադատական մտածողության զարգացումը գրականության դասերին

Առարկա՝ Գրականություն

Ուսումնական հաստատություն՝ Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Անահիտ Սիսյան

Ղեկավար՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

[illegible]

Նախաբան

Ժամանակակից աշխարհում արագ փոփոխվող իրականության, տեղեկատվական տեխնոլոգիաների գլխապտույտ զարգացման պայմաններում կարևորագույն խնդիր է դարձել քննադատական մտածողության ունակությունների զարգացումը: Ժամանակակից մարդը ներկայիս աշխարհում հարմարվելու, գործելու և ստեղծագործելու համար պետք է ունենա քննադատական միտք, որպեսզի կարողանա արժևորել և տեղին կիրառել ստացված տեղեկատվությունը: Ուստի այստեղ մեծ դեր է խաղում դպրոցը, քանի որ վերջինս անհատի մեջ վաղ տարիքից կարող է ձևավորել վերլուծելու, սեփական կարծիքն արտահայտելու, փաստերն այլ տեսանկյունից դիտարկելու հմտություններ: Դպրոցն այն օղակն է, որը միտված է իրականացնելու կարողունակահեն կրթություն՝ շեշտադրելով գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների համատեքստում աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը:

Սույն հետազոտական աշխատանքում ներկայացվում է քննադատական մտածողության ձևավորման կարևորությունը դպրոցում: Աշխատության մեջ ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների ձևավորման գործընթացը գրականության դասաժամերին: Քանի որ գրականությունից է սկսվում այն ճանապարհը, որը ձևավորում է պրպտող և վերլուծող երիտասարդների: Գրականությունը ներկայացնում է բազմակողմանի թեմաներ, տարբեր կերպարներ, վերջիններիս կատարած ընտրությունները, կատարած քայլերի դրդապատճառները: Աշխատանքի մեջ անդրադարձել ենք, թե ինչպես գեղարվեստական ստեղծագործության միջոցով աշակերտները կարող են զարգացնել իրենց վերլուծական հմտությունները, հիմնավորված դատողություններ անել, ճիշտ գնահատել և իմաստավորել երևույթները:

Ինչ է քննադատական մտածողությունը

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ հարցականի տակ է դրվում ստացվող տեղեկության հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները:

Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է եղել:
Քննադատական մտածողությունը ենթադրում է, որ անհատը հարցաքննում է, վերլուծում, մեկնաբանում, գնահատում և դատողություն է անում իր կարդացածի, լսածի, ասելու կամ գրածի վերաբերյալ: «Քննադատություն» տերմինը ծագել է հունարեն kritikos բառից, որը նշանակում է «կարող է դատել կամ տարբերել»: Քննադատական մտածողությունը վստահելի տեղեկատվության հիման վրա վստահելի դատողություններ անելն է:

Քննադատական մտածողության, վերջինիս տարրերի և դրա հետ կապված գործունեության սահմանումներին բազմիցս անդրադարձել են վերջին տարիներին: Քննադատական մտածողությունը նկարագրվել է որպես հարցադրման կարողություն. ընդունել և ստուգել նախկինում կայացրած ենթադրությունները, ճանաչել երկիմաստությունը, ուսումնասիրել, մեկնաբանել, գնահատել, պատճառաբանել և արտացոլել, կայացնել տեղեկացված դատողություններ և որոշումներ, հստակեցնել, ձևակերպել և հիմնավորել դիրքորոշումները:
րդ դարում «քննադատական մտածողություն» հասկացությունը գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Քննադատական մտածողությունը անքակտելիորեն կապված է մարդկային գործունեության հետ: Մարդը կարող է ոչինչ չիմանալ քննադատական մտածողության մասին, սակայն իր դատողություններում միշտ կիրառել քննադատական տարրեր:

Քննադատական տարրերը միշտ եղել են մարդկային մտածողության մեջ: Քննադատական փաստարկներ փիլիսոփայության մեջ հայտնաբերվել է Հին Հունաստանի ժամանակներից, օրինակ Պլատոնի երկխոսություններում: Իսկ Արիստոտելը զարգացնում է Պլատոնի հայեցակարգի համակարգված քննադատությունը:

Արդի ժամանակներում քննադատությունը դարձել է փիլիսոփայական տեսության համակարգային բաղադրիչ:

Քննադատական մտածողությունը էականորեն տարբերվում է ստեղծագործական մտածողությունից: Ա.Ն. Շումանը կարծում է, որ ստեղծագործական մտածողությունը չի ներառում ստանդարտ սխեմաների օգտագործում. դա կարողություն է որը դժվար է սովորել: Սակայն ստեղծագործական մտածողությունը անհնար է առանց քննադատական մտածողության:

Անհնար է ստեղծել ինչ-որ նոր բան՝ առանց քննադատելու այն, ինչ արդեն կա: Քննադատական մտածողությունը ծառայում է որպես հիմք ստեղծագործական մտածողությանը, նոր գաղափարների ձևավորման առաջին փուլն է, հնի քննադատությունը:

Քննադատական մտածողության ամենակարևոր կետերն են.

- համակարգվածություն
- բարդություն
- դատողությունների հետևողականություն
- բազմակողմանի տեսանկյուններ
- մետաճանաչում (արտացոլման և բազմամակարդակության առկայություն)
- սովորելու հասանելիություն

Քննադատական մտածողություն կիրառելը չի նշանակում լինել բացասական կամ կենտրոնանալ թերությունների վրա, այլ նշանակում է կարողանալ հստակեցնել մտածողությունը, որպեսզի հնարավոր լինի խնդիրը կամ տեղեկությունը, մեկնաբանել և կիրառել այդ մեկնաբանությունը՝ տեղեկացված որոշման կամ դատողության հասնելու համար (օրինակ՝ արձագանքել կարծիքին կամ հասկանալ քաղաքական դրդապատճառը):

Քննադատական մտածողությամբ ոչ մեկը չի ծնվում, ուստի այն պետք է ձևավորվել անհատի մեջ:

Քննադատական մտածողություն ձևավորելու համար, պետք է իմանալ, թե ինչպես հստակեցնել անհատի մտածողության նպատակը և համատեքստը՝

- հարցականի տակ դնել տեղեկատվության աղբյուրները
- բացահայտել փաստարկները
- վերլուծել աղբյուրները և փաստարկները
- գնահատել այլոց փաստարկները
- ստեղծել կամ սինթեզել սեփական փաստարկները

Քննադատական մտածողությունը կարելի է բնութագրել որպես ռեֆլեկտիվ և անկախ մտածողության մեջ ներգրավվելու ունակություն:

Ըստ էության, քննադատական մտածողությունը պահանջում է օգտագործել անձի տրամաբանելու կարողությունը:

Քննադատական մտածողությունը խստորեն հարցականի տակ է դնում գաղափարներն ու ենթադրությունները: Նրանք միշտ ձգտում են պարզել, թե արդյոք գաղափարները, փաստարկները և բացահայտումները ներկայացնում են ամբողջական պատկերը: Այն ենթադրում է խնդիրների ու իրողությունների համակարգված բացահայտում և վերլուծություն:

Քննադատական մտածողության հմտություններ ունեցող անհատը կարող է՝

- հասկանալ գաղափարների միջև կապը
- որոշել փաստարկների և գաղափարների կարևորությունն ու արդիականությունը
- ճանաչել, կառուցել և գնահատել փաստարկները
- բացահայտել անհամապատասխանություններն ու սխալները տրամաբանության մեջ
- խնդիրներին մոտենալ հետևողական և համակարգված ձևով
- մտածել սեփական ենթադրությունների, համոզմունքների և արժեքների հիմնավորման մասին

Քննադատական մտածողության ձևավորման կարևորությունը դպրոցում

Մեր օրերում կրթական ոլորտի անդադար զարգացումը հանգեցրեց նրան, որ այլևս բավարար չէ միայն գիտելիքների պաշարը: Աշակերտների մեջ առաջնորդության հմտություններ ձևավորելու, մեր օրերում առկա հսկայական տեղեկատվության հետ առնչվելու համար էական նշանակություն ունի քննադատական մտածողության ձևավորումը:

Քննադատական մտածողությունը ձևավորում է հետևյալ հմտությունները՝

- **խնդիրներ լուծելու հմտություններ**

Խնդիրներ լուծելու կարողությունների ձևավորումից մինչև որոշումների կայացման խթանում, քննադատական մտածողությունը առանցքային դեր է խաղում անհատների ձևավորման մեջ, ովքեր պատրաստ են դառնալ վաղվա առաջնորդները:

Դպրոցներում քննադատական մտածողության սերմանման առավել ակնհայտ առավելություններից մեկը խնդիրներ լուծելու ուժեղ հմտությունների զարգացումն է: Քննադատ մտածողներն օժտված են բարդ հարցերը տարբեր տեսանկյուններից վերլուծելու և ստեղծագործ և արդյունավետ լուծումներ ձևակերպելու կարողությամբ:

- **որոշումների կայացնելու հմտություններ**

Տեղեկատվության մեր իրականությունում փաստն ու հորինվածքը տարբերելու կարողությունն առաջնային է: Քննադատական մտածողությունը աշակերտներին տալիս է հմտություններ աղբյուրները քննադատաբար գնահատելու, վստահելի տեղեկատվությունը ապատեղեկատվությունից առանձնացնելու և լավ տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Այս հմտությունը կարևոր է ոչ միայն կրթական հաջողությունների, այլև պատասխանատու քաղաքացի լինելու համար:

- **ստեղծարար մտածողության հմտություններ**

Քննադատական մտածողությունը և ստեղծարարությունը սերտ կապված են միմյանց հետ: Այն դպրոցները, որոնք շեշտը դնում են քննադատական մտածողության վրա, ստեղծում են մի միջավայր, որտեղ աշակերտներին խրախուսվում է մարտահրավեր նետել առկա նորմերին և ուսումնասիրել նորարարական լուծումներ: Այս հատկությունները շարժիչ ուժն են գիտության, տեխնիկայի, արվեստի և մարդկային գործունեության ցանկացած այլ բնագավառի առաջընթացի համար:

- **հաղորդակցման հմտություններ**

Արդյունավետ հաղորդակցությունը մեր օրերում հաջողության հասնելու գրավականներից մեկն է: Քննադատական մտածողությունը նպաստում է աշակերտի կարողությանը՝ արտահայտելու մտքերն ու գաղափարները: Այս հմտությունը կենսական նշանակություն ունի ինչպես անձնական հարաբերությունների, այնպես էլ մասնագիտական հաջողության համար, քանի որ այն աշակերտները, ովքեր կարող են իրենց գաղափարները փոխանցել պարզ և հստակ, կարող են լավ առաջնորդներ լինել:

- **ճկունություն և հարմարվողականություն**

Ներկայիս արագընթաց փոփոխվող աշխարհում տարբեր իրավիճակներում հարմարվելու և զարգանալու կարողությունն անգնահատելի է: Քննադատ

մտածողներն ավելի լավ կարող են մարտահրավերներին դիմակայել՝ նոր հանգամանքներին հարմարվելով և դժվարություններին դիմակայելով: Նրանք խոչընդոտները դիտարկում են որպես աճի հնարավորություն և ունեն մտավոր ճկունություն:

- **ուսանելու խթանում**

Դպրոցներում քննադատական մտածողության զարգացումը սերմանում է սովորելու հանդեպ սեր և գիտակցում, որ կրթությունը սահմանափակված չէ որոշակի ժամանակով կամ վայրով: Քննադատ մտածողները ողջ կյանքի ընթացքում սովորողներ են, ովքեր անընդհատ ձգտում են ընդլայնել իրենց գիտելիքները՝ հասկանալով, որ միայն այդպես նրանք կարող են ժամանակակից աշխարհի դինամիկ մարտահրավերներին դիմակայել:

Այսպիսով կարող ենք նշել, որ դպրոցում քննադատական մտածողության ձևավորումը մեր օրերում անհատի ձևավորման կարևորագույն քայլերից մեկն է:

Քննադատական մտածողության ձևավորումը գրականության դասերին

Կրթական ոլորտում գրականությունից է սկսվում այն ճանապարհը, որը ձևավորում է պրպտող և վերլուծող երիտասարդների: Գրական ստեղծագործությունները կարող են զարգացնել աշակերտների երևակայությունը, ձևավորել կարեկցանք և, թերևս, ամենակարևորը, զարգացնել քննադատական մտածողություն: Գրականությունը դպրոցներում ծառայում է խթան աշակերտների ներուժը բացահայտելու համար:

Եվ այսպես, ինչպե՞ս է գրականությունը զարգացնում աշակերտների քննադատական մտածողությունը:

Նախևառաջ գրականությունը ներկայացնում է բազմակողմանի թեմաներ, տարբեր կերպարներ, վերջիններիս կատարած ընտրությունները, կատարած քայլերի դրդապատճառները և այլն: Երբ աշակերտները սկսում են ուսումնասիրել գրական ստեղծագործություն, նրանք սկսում են ուսումնասիրել կերպարների ընտրություն-ներն ու քայլերը, հարցականի տակ դնել դրանց ճիշտ կամ սխալ լինելը: Այս ամենը դրդում է նրանց քննադատաբար մտածել մարդկային վարքի և որոշումների հետևանքների մասին:

Գրականությունը աշակերտներին հնարավորություն է տալիս դիտարկել տարբեր մշակույթների պատկանող հերոսների քայլերը: Սա խթանում է աշակերտների մեջ կարեկցելու ունակությունը և օգնում աշխարհը տեսնել տարբեր անկյուններից: Երբ գրականության դասաժամերին աշակերտները սկսում են վերլուծել այս կամ այն գրական ստեղծագործության կերպարներին, նրանց մոտ սկսում է ձևավորվել հարցերին տարբեր տեսանկյուններից նայելու ունակությունը, որը քննադատական մտածողության հիմնաքարերից մեկն է:

Գրական տեքստում ներառված սիմվոլները, փոխաբերությունները աշակերտներին «ստիպում են» ավելի խորը վերլուծել տվյալ գործը՝ ամրապնդելով վերջիններիս վերլուծական հմտությունները: Բացի վերլուծություններից, կարևոր է դասի ընթացքում կազմակերպել քննարկումներ, որտեղ աշակերտները ազատ կարող են արտահայտել իրենց կարծիքը, մեկնաբանել տվյալ հերոսի քայլերի վերաբերյալ: Սա աշակերտների մեջ ձևավորում է սեփական տեսանկյունը արտահայտելու և հիմնավորելու ունակություն՝ հարգելով դիմացինի կարծիքը: Նման քննարկումների կազմակեպումը դասաժամին աշակերտներին հնարավորություն է տալիս մասնակից լինել առողջ բանավեճերի: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումները-ինչու՞, ի՞նչ հետևանքների է հանգեցնում, ինչպե՞ս եք գնահատում: Այս հարցերի միջոցով աշակերտները կառուցում են պատճառահետևանքային կապերի տրամաբանական մի շղթա, որը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել և գնահատել իրողությունները: Բաց հարցերը մեծացնում են աշակերտների հետաքրքրությունները թեմայի նկատմամբ և մոտիվացնող նշանակություն ունեն: Նրանք փորձում են առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել, առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը:

Գրականության դասաժամերին աշակերտները ուսումնասիրում են գրողի ոճային և տեխնիկական առանձնահատկությունները, որը հնարավորություն է տալիս վերջիններիս գնահատել տվյալ հեղինակի կողմից առաջարկված ստեղծագործական լուծումները:

Եվ այսպես, ինչպես ապահովել անհրաժեշտ պայմաններ արդյունավետ դասընթաց կազմակերպելու համար:

Փորձը ցույց է տալիս, որ շատ աշակերտները չեն մասնակցում դասարանային քննարկումներին և սեփական տեսանկյունն ու վերլուծությունները հայտնելու գործընթացին: Սա թերևս պայմանավորված է մի շարք պատճառներից՝ սխալվելու

վախ, ամաչկոտություն, անհասկացված լինելը: Ուստի պետք է դասարանում այնպիսի միջավայր ստեղծել, որպեսզի բոլոր աշակերտները հավասարապես ներգրավված լինեն քննարկումներին և ազատ ու անկաշկանդ կարողանան արտահայտել սեփական տեսակետը:

Նման անմիջական միջավայր ստեղծելու համար առաջակում ենք հետևյալ քայլերը.

- Դասընթացին ներգրավել բոլոր աշակերտներին, փորձել լսել վերջիններիս առանց ընդհատելու: Աշակերտը պետք է կարողանա սեփական տեսանկյունը ներկայացնել առանց վախենալու, որ քննադատության կենթարկվի:
- Խրախուսել աշակերտներին վստահություն ձեռք բերելու և ակտիվ մասնակցելու համար:
- Ճիշտ հարցադրումներ կատարել, որպեսզի աշակերտները հիմնավորեն սեփական տեսանկյունը:
- Կազմակերպել խմբային քննարկումներ:

Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող շատ մեթոդներ և հնարներ կան, որոնցից մեկը Է.դե Բոնոյի <<Մտածող գլխարկներ>> մեթոդն է, որի հիմքում ընկած է զուգահեռ մտածելու կարևորությունը: Այն թույլ է տալիս զարգացնել մտքի ճկունությունը, կայացնել ճիշտ որոշումներ, արտահայտել սեփական դատողությունները

Ներկայացնում ենք 7-րդ դասարանի դասի պլան, որտեղ ապահովվել են քննադատական մտածողության զարգացմանը նպաստող պայմաններ:

Թեմա-Ա. Բակունց «Սպիտակ ձին» պատմվածքը:

Նպատակը-ամրապնդել աշակերտների գիտելիքները «Սպիտակ ձին» պատմվածքի վերաբերյալ, քննարկել հերոսների վարքագիծը ներկայացված իրավիճակներում, զարգացնել պատկերացումը տեքստում պատկերված մարդ-հասարակություն-բնություն փոխհարաբերությունների մասին, ձևավորել աշակերտների քննադատական և ստեղծագործական կարողությունները:

Վերջնարդյունք-բացահայտի տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը, ցույց տա դեպքերի հաջորդական ընթացքը, ձևակերպի եզրակացություններ, անկաշկանդ արտահայտի, հիմնավորի և մեկնաբանի սեփական տեսակետը:

Ընթացքը-կազմակերպչական պահից հետո դասարանը բաժանել 6 խմբի:

Յուրաքանչյուր խմբի բաժանել գլխարկները, բացատրել գույների նշանակությունը: Այնուհետև տրամադրել թերթիկներ, որոնց վրա գրված են, թե հարցի որ կողմը պետք է ներկայացնեն: Աշակերտներին օգնելու նպատակով կարելի է թերթիկների վրա գրել հարցեր և բանալի բառեր: Աշխատանքի ընթացքում մոտենալ խմբերին, օգնել,

ուղղորդել: Խմբերին տրամադրվող թերթիկներն այսպիսին են:

Սպիտակ գլխարկ

Ներկայացնել պատմվածքի գործողությունները, փաստարկներ, տեղեկատվություն:

- Ո՞ր ժամանակաշրջանում են դեպքերը տեղի ունենում:
- Ինչու՞ Սիմոնը և մյուս գյուղացիները իրենց ձիերը տարան հանձնելու ռուսական բանակի ներկայացուցիչներին:

Բանալի բառեր

- Հայտնի է, որ...
- Փաստ է, որ...

Կանաչ գլխարկ

Առաջ քաշել նոր գաղափարներ, հնարավոր տարբերակներ, փոխել գործողությունների ընթացքը՝ պահելով ընդհանուր սյուժետային գիծը:

- Ի՞նչ կարևոր թեմաներ և հիմնախնդիրներ կային պատմվածքում, որո՞նք են արդիական:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք Սիմոնին տվյալ բարդ իրավիճակից դուրս գալու համար:
- Ո՞րն է հեղինակի չասած միտքը:

Բանալի բառեր

- Սա հնարավոր է դարձնում, որ...
- Կարելի էր այնպես անել, որ...

Դեղին գլխարկ

Ներկայացնել հարցի դրական կողմերը, առավելությունները:

- Ի՞նչ օգուտ տվեցին գյուղացիները ձիերը հանձնելով:
- Սիմոնի և ընտանիքի վերաբերմունքը ձիու նկատմամբ:

Բանալի բառեր

- Կարևոր է, որ...
- Լավ է, որ...

Կարմիր գլխարկ

Ներկայացնել պատմվածքում առկա անհանգստությունները, տագնապներն ու հիասթափությունները:

- Ինչպե՞ս Սիմոնի ընտանիքը ճանապարհեց ձիուն:
- Ներկայացրեք Սիմոնի ապրումները, ձիու մեջքին վերք առաջնելուց հետո:
  Բանալի բառեր
- Ինձ թվում է...
- Կարծում եմ...

Կապույտ գլխարկ

- Ներկայացնել պատմվածքում ներկայացված խնդիրները:
- Ներկայացնել արծածված գաղափարները:

Բանալի բառեր

- Ինչպե՞ս հասկացանք...
- Սովորեցի, որ...

Սև գլխարկ

Ներկայացնել պատմվածքում առկա վտանգները, բացասական երևույթները:

Ինչի՞ է ընդունակ մարդը հուսահատ վիճակում:
Ի՞նչ վտանգ է սպառնում գյուղացուն պատմվածքում նկարագրված իրադարձություններից հետո:

Բանալի բառեր

- Վատ է, որ...
- Վտանգավոր է, որովհետև...

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց աշխատանքները, պատասխանում մյուս խմբի հարցերին, կատարում որոշ պարզաբանումներ: Հարցերը ոչ թե սյուժեի տեսական ճշտումներ են, այլ արարքների, պահվածքի հոգեբանական դրդապատճառների վերհանում: Խմբային քննարկումների ընթացքում աշակերտները հստակորեն ներկայացրին արդարության, ազատության, սոցիալական անհավասարության մեջ գոյատևող հասարակության խնդիրները, փորձեցին գտնել այդ խնդիրներից ազատվելու հարմար լուծումներ: Զուգահեռ անցկացրին Սիմոնի և Կոստանդ աղայի արարքների

միջև, ցույց տվեցին երկուսի անարդար քայլերը,որոնց նպատակները նույնն էին, սակայն տարբեր էին հնարավորությունները: Նմանատիպ դասերը նպաստում են աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը, որի շնորհիվ դառնում են ավելի ինքնուրույն և անկախ: Նրանք կարողանում են ազատ արտահայտել հիմնավորված տեսակետներ, սեփական մեկնաբանությունների միջոցով վերլուծել կերպարների արարքների պատճառներն ու հետևանքները:



Եզրակացություն

Այսպիսով կարող ենք փաստել, որ դպրոցներում գրականության ուսումնասիրությունը չի սահմանափակվում միայն գրական ստեղծագործություններ կարդալով կամ անգիրներ սովորելով: Մեր օրերում գրականությունը հիանալի միջոց է քննադատական մտածողություն ունեցող անհատներ դաստիարակելու: Գրականության միջոցով սովորողները ուսումնասիրում են համամարդկային փորձը, բախվում բարդ գաղափարների հետ և սովորում վերլուծել, գնահատել և ինքնուրույն մտածել: Գրականության կարևորությունը քննադատական մտածողության հմտությունները զարգացնելու գործընթացում չի կարելի թերագնահատել, քանի որ այն սովորողներին զինում է այն հմտություններով, որոնք անհրաժեշտ են ակադեմիական, մասնագիտական և ընդհանուր զարգացվածության համար:

Ինչպես տեսնում ենք քննադատական մտածողությունը օժտում է սովորողներին բարդ խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու հմտություններով: Այս հմտությունները սովորողները կարող են կիրառել հետագա ողջ կյանքի ընթացքում: Քննադատական մտածողություն ունեցող անհատը ունակ է ստեղծագործական լուծումներ գտնել արդի մարտահրավերներին: Նա ունակ է արդյունավետ հաղորդակցվել՝ սեփական կարծիքն ու գաղափարները հստակ և համոզիչ արտահայտելով: Իսկ մեր օրերում արդյունավետ հաղորդակցությունը անգնահատելի հմտություն է, որը կարող է թե՛ ակադեմիական, թե՛ մասնագիտական ոլորտում հաջողությունների գրավականը լինել անհատի համար:

Քննադատական մտածողություն ունեցող անհատները ավելի ճկուն են և կարող են հարմարվել և ընդունել ներկայիս աշխարհում գլխապտույտ արագությամբ կատարվող փոփոխությունները: Ինչպես տեսնում ենք մեր հասարակությունն ունի նման անհատների կարիքը: Քանի որ ժողովրդավարական հասարակության մեջ կարևոր են տեղեկացված, իրազեկ և քննադատող քաղաքացիները: Նրանք կարող են սթափ ընդունել տեղեկատվությունը, ընդունել ճիշտ որոշումներ և ակտիվ կերպով մասնակցել գիտակից հասարակության ձևավորման գործընթացին: Ուստի գիտակից հասարակությունը կայուն պետության հիմնասյունն է: Իսկ գիտակից անհատի ձևավորումը սկսվում է դպրոցից:

Օգտագործված գրականության ցանկ

утенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176

вунина Е. Е. О различных подходах к понятию «критическое мышление» // Молодой учёный. — 2009. — № 11. — С. 170—174.

.Н. Грифцова, Г.В. Сорина Идеи критического мышления сквозь призму историко-философской мысли // Демократия в России и Европе: философское измерение: Материалы Международной конференции «Философские проблемы демократического общества» / Под. ред. В.Н. Брюшинина. — Калининград: Изд-во КГУ, 2003. 232 с.

уман А.Н. Современная логика: теория и практика — Мн.: Экономпресс, 2004. — 416 с.